



Հայտարարություն

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում

Սույնով տեղակայցնում ենք, որ 2014 թվականի ապրիլի 23-ին «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն նախատեսում է իրականացնել անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկում և տեղաբաշխում:

Պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվելու է «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի առաջնային տեղաբաշխման հարթակում:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն հանդես է գալիս որպես տեղաբաշխող, իսկ թողարկվող պարտատոմսերի ցուցակումից հետո իրականացնելու է նաև շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) գործառույթներ:

Պարտատոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում 2014թ ապրիլի 8-ին:

Ազդագրի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայք էջերում, համապատասխանաբար՝ www.nmc.am և www.armswissbank.am հասցեներով:

Թողարկման հիմնական պայմանները ներկայացված են ստորև.

Պարտատոմսերի դասը	Անվանական արժեկտրոնային
Պարտատոմսերի ձևը	Ոչ փաստաթղթային
Պարտատոմսերի փոխարկելիությունը	Ոչ փոխարկելի
Պարտատոմսերերի շրջանառության ձևը	Ազատ շրջանառության իրավունքով
Պարտատոմսերի ապահովվածությունը	Պարտատոմսերն ապահովված են Թողարկողի կողմից իր գործընկեր ֆինանսական հաստատություններին տրամադրված վարկերից բխող պահանջի իրավունքի գրավով
Պարտատոմսերի տեղաբաշխման եղանակը	Երաշխավորված
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի քանակը	10,000 (տաս հազար) հատ
Թողարկման ընդհանուր ծավալը	1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերությունը	10% տարեկան
Արժեկտրոնային եկամուտների վճարումը	Կիսամյակային պարբերականությամբ
Ուղղորդիչ նվազագույն գին*	97,502.23 (իննսունյոթ հազար հինգ հարյուր երկու ամբողջ քսաներեք) ՀՀ դրամ

Շրջանառության ժամկետը	36 ամիս
Տեղաբաշխման օրը	23.04.2014թ.
Տեղաբաշխման սկիզբը	23.04.2014թ. ժամը 11:00
Տեղաբաշխման ավարտը	23.04.2014թ. ժամը 13:30
Մարման օրը	Պարտատոմսերի թողարկման օրվանից հաշվարկված 36-րդ ամսվա համապատասխան օրը
Պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև	$DP = \frac{C}{f} \sum_{i=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 \cdot f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 \cdot f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>որտեղ՝ DP - Պարտատոմսի գին, DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակ, DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ, f - արժեկտրոնի վճարման հաճախականություն, N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, y- թողարկման պահին մինչև մարում եկամտաբերություն</p>
Օրերի հաշվարկման պայմանականություն	փաստացի/փաստացի (ACT/ACT)
Արժեկտրոնի կուտակման բանաձև	$AI = FV * \frac{C}{f} * \frac{DCS}{DCC}$ <p>որտեղ՝ AI - կուտակված տոկոսագումար, FV - պարտատոմսերի անվանական արժեք, C - արժեկտրոնի տարեկան անվանական տոկոսադրույք, f - արժեկտրոնի վճարման հաճախականություն (f=2՝ կիսամյակային վճարումների դեպքում),</p>

	<p>DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակ, DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ:</p>
--	--

Պարտատոմսերի պոտենցիալ գնորդների նկատմամբ սահմանափակումներ չկան:

Պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցել ցանկացողները կարող են դիմել «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ ֆոնդային բորսայի անդամ հանդիսացող ընկերություններին, որոնց ցանկն ու կոնտակտային տվյալները ներկայացված են <http://nasdaqomx.am/am/members.htm> ինտերնետային հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարներով՝ (37410) 540782, (37410) 540696 կամ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ հետևյալ հեռախոսահամարով՝ (37410) 560741:

* Հաշվի առնելով, որ թողարկումն իրականացվում է երաշխավորված եղանակով, Ազդագրով սահմանված կարգով և Թողարկողի ու Տեղաբաշխողի միջև կնքված համաձայնագրով ամրագրվել է ուղղորդիչ նվազագույն գին, որից ցածր գնով պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքում ներկայացվող հայտերը չեն բավարարվելու, իսկ չտեղաբաշխված պարտատոմսերի ամբողջ ծավալը ձեռք է բերվելու Տեղաբաշխողի կողմից ուղղորդիչ նվազագույն գնով: